

## ՀԱՅՐ ՄԻՆԱՍ ԲԺՇԿԵԱՆԻ «ԾԵՄԱՐԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ

Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի բազմադարեան պատմութեան էջերում անուրանալի է Մխիթար Սեբաստացու եւ Մխիթարեանների բերած նպաստը:

Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Յարութիւն Վրդ. Պատիկեանը Մխիթարեանների գիտակրթական գործունէութիւնը տասը հիմնական ենթաբնագաւառների է բաժանել. լեզուական վերանորոգում, պատմագրութիւն-հնախօսութիւն, կրօնական-ծիսական-հայրախօսական-բարոյական աշխատանքներ, հրատարակութիւն նախնեաց գործերի, դասական գրականութեան շարժում, աշխարհաբար լեզուի յայտնութիւն եւ գործառութիւն, ծնունդ հայ թատրոնի, կրթական-դպրոցական ասպարէզ, գեղարուեստական-քարտեզագրական հրատարակութիւններ, հիմնարկութիւն Մխիթարեան ակադեմիայի (կաճառի)<sup>1</sup>:

Ընդունելով վերը բերուածը, կարծում ենք, որ յստակ չի ընդգծուած Մխիթարեանների վիթխարածաւալ գործունէութիւնը ԺԸ-ԺԹ. դարերում հանրագիտարանային բնոյթի մեծարժէք եւ մինչեւ օրս իրենց արժէքը չկորցրած հիմնարար ուսումնասիրութիւնների հրատարակման ազգանուէր գործում: Մեր ուսումնասիրութիւններից մէկում հպանցիկ անդրադարձել ենք այս խնդրին<sup>2</sup>:

Ժամանակագրական առումով ԺԹ. դարում Մխիթարեանների լոյս ընծայած առաջին հանրագիտարանը Հայր Մինաս Բժժըկեանի «Ճեմարան գիտելեաց» աշխատութիւնն է:

<sup>1</sup> ՊԶՏԻԿԵԱՆ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ., Մխիթարի եւ Մխիթարեաններու նըպաստը հայ մշակոյթին, «Բազմավէպ», 1999, 1-4, էջ 97:

<sup>2</sup> ՓԱՇԱՅԵԱՆ Ա., 19-րդ դարում Մխիթարեան միաբանութեան հրատարակած հանրագիտարանները, «Պայթար» ամսագիր, 1998, թիւ 1, էջ 31-33:

Հ. Մինաս Վրդ. Բժշկեանը ծնուել է 1777 թ. Տրապիզոնում, ճանաչուած բժիշկ Մանուկի ընտանիքում: 1804-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուելուց եւ ծայրագոյն վարդապետական գաւազանը կրելուց յետոյ մինչեւ 1808 թ. պաշտօնավարել է Ս. Ղազար կղզում: Այնուհետեւ տեղափոխուել է Կ. Պոլիս, նշանակուել Բերա թաղամասի Մխիթարեան վարժարանի տեսուչ: 1815-ից որպէս տնային դաստիարակ ծառայել է Տիւզեան ամիրաների ապարանքում: Միաժամանակ եղել է Բերա թաղամասի Մխիթարեան վարժարանի թատերական խմբի ղեկավար, ուր 1810-ին ներկայացրել է «Արտաշիւր թագաւորի կեանքը» ներկայացումը<sup>3</sup>:

Կարճ ժամանակաշրջան գործել է իր ծննդավայրում՝ Տրապիզոնում, ուր նուիրուել է տեղի հայ համայնքի գիտակրթական մակարդակի բարձրացմանը, բացել վարժարան: Հանդիպելով սակայն տարաբնոյթ դժուարութիւնների եւ հալածանքների, ստիպուած թողել է իր իսկ հիմնած կրթօջախը եւ անցել Ղրիմի Ղարասուբազար (այժմ՝ Ուկրաինայի Բելոգորսկ քաղաք) բնակավայր, ուր աւելի նպաստաւոր պայմաններ են եղել, քան ծննդավայրում: Ղարասուբազարցի բարերարների նուիրուած գումարներով կառուցել է եկեղեցի, վանատուն եւ վարժարան:

Ինչպէս վկայում է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Մեսրոպ Վրդ. ճանաչեանը. «Մեծապէս սիրուած եւ յարգուած էր ժողովրդից: Ալեքսանդր Ա. (1801-1825) ցանկնալով Մ. Բժշկեանի արդիւնաւետ գործունէութիւնը՝ պատուել է զինքը զանազան շքանշաններով»<sup>4</sup>:

1845 Սեւաստօպոլում Մ. Բժշկեանը ներկայանալով Նիկոլայ Ա. թագաւորին, նրան է նուիրել է իր «Բազմալեզուեան Քերականութիւն»ը, ստանալով նրանից ոսկէ մեդալ: Աւելի ուշ, Հայր Մ. Բժշկեանը «Ռուսերէն-Հայերէն քերականութիւն»ը նուիրել է թագաժառանգ Ալեքսանդրին՝ ստանալով վերջինից ականակուռ մատանի:

<sup>3</sup> ՍՏԵՓԱՆԵԱՆ Գ., Կենսագրական քառարան, հտ. Ա, Երեւան, 1973, էջ 199:

<sup>4</sup> ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ., Սուրբ Ղազար: Մայրավանք Միխրարեան միաբանութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 107:

Կեանքի վերջին տարիներին վերդարձել է Ս. Ղազար կղզի՝ աւարտին հասցնելու իր քառալեզուեան (ռուսերէն-ֆրանսերէն-հայերէն-թուրքերէն) բառարանը: Վերահաս մահը սակայն կանխեց նրան՝ տեսնելու իր այդ յոյժ կարեւոր գործի աւարտը: Մահացել է 1861-ին, Վենետիկում:<sup>5</sup>

Մէկ տասնեակից աւելի ինքնուրոյն եւ թարգմանական ուսումնասիրութիւնների հեղինակ է:

Հայր Մ. Բժշկեանի գիտական գործունէութեան մէջ յատկապէս առանձնանում է 1815 թ. Վենետիկի Մխիթարեանների տպարանում գրաբար լոյս տեսած 380 էջանոց «Ճեմարան գիտելեաց» գիրքը, որը 1818-ին, դարձեալ Վենետիկում, վերահրատարակուել է: Գրքի ամբողջական վերնագիրն է՝ «Ճեմարան գիտելեաց, որ է համառօտ տեղեկութիւն հարկաւոր գիտութեանց, ազատական արուեստից»: «Ազատական» բառը մեկնաբանուում է այսպէս. «Ազատներին յատուկ, ազատամտական, ազնուական, մի քանից ազատուելու իրաւունքի փաստաթուղթ»<sup>6</sup>: Մեր պարագայում միայն ազատամտականն է համահունչ գրքի բովանդակութեանը: Նախ նշենք, որ ԺԹ. դարի սկզբին ոչ բոլոր բնական գիտութիւններն են ինքուրոյն համարուել: Շատ յաճախ մի շարք բնական գիտութիւններ նկարագրուել են մէկ գրքում: Այսպէս. 1810 թ. Վենետիկում դարձեալ գրաբարով գրուած Հայր Յակոբ Վրդ. Ստեփանեանի «Տեսարան աշխարհի» 452 էջանոց գրքում քննարկուած են անկենդան եւ բուսական աշխարհները, կենդանաբանութիւնը, մարդու կազմութիւնը եւ հանդերձեալ կեանքը, հրեշտակները: Աւելին, շատ ու շատ գրքերի վերնագրերից դժուար է կռահել, թէ ինչ բնական գիտութիւններն են ընդգրկուած: Ասածներս փաստենք միայն մէկ օրինակով: 1842-ին Վիեննայում աշխարհաբար արեւմտահայերէնով լոյս տեսած Մատթէոս Սաղաթելեանի «Համառօտ քնական գիտութիւն» արժեքաւոր գրքի 528 էջերից շուրջ 450-ը նուիրուած են Ֆիզիկային, իսկ միւսները՝ քիմիային եւ օդերեւութաբանութեանը: ԺԹ. դարի կէսերից միայն բնական գիտութիւնները առանձին-առանձին են ներկայացուել:

<sup>5</sup> ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ., Եջ. աշխ., 1966, էջ 107:

<sup>6</sup> ԱՂԱՅԵԱՆ Է., Արդի հայերեւի բացատրական բառարան, հտ. 1, Եր., 1976, էջ 5:

Հայր Մ. Բժշկեանի յիշեալ հանրագիտարանում բնական բոլոր գիտութիւնները քննարկուած են առողջ, ազատ եւ ժամանակի գիտական մակարդակն ապահովող մտածողութեամբ: Նախ համառօտ քննենք, թէ հայատառ ինչպիսի հանրագիտարաններ են գրուել եւ հրատարակուել մինչ Հայր Մ. Բժշկեանի «Ճեմարան գիտելեաց»ի լոյս տեսնելը:

Հանրագիտական բառարաններ կազմելու փորձեր հայ իրականութեան մէջ արուել են դեռ վաղ միջնադարում: Մեզ են հասել հանրագիտական բնոյթի ձեռագրային պատառիկներ, առանձին հատուածներ: Հրատարակուած հանրագիտարաններից առաջնութիւնը մեր կարծիքով պետք է տալ 1711 թ. Վենետիկում լոյս տեսած Խաչատուր Էրզրումցու (1666-1740) «Համառօտական իմաստասիրութիւն» գրքաբար հանրագիտարանին: Ութ մասից բաղկացած չափածոյ այս իւրօրինակ գրքում հիմնականում քննարկուած են մաթեմատիկան, թուաբանութիւնը, երկրաչափութիւնը, աստղագիտութիւնը, երաժշտութիւնը, մետաֆիզիկան, ընդհայեցողութիւնը, կշռորդաբանութիւնը: Քաջ տիրապետելով յունարէնին եւ լատիներէնին Խ. Էրզրումցին յիշեալ գրքում գործածել է շատ բառեր այդ լեզուներով<sup>7</sup>:

Ժամանակագրական առումով յաջորդ հանրագիտարանը պէտք է համարել Արսէն Դպիր Կոստանդնուպոլսեցու՝ «Գիրք սահմանաց յոգնադիմի սատուածաբանական, բնական, բարոյական եւ քաղաքական իրողութեանց գիտութիւնք» աշխատութեանը, որը լոյս է տեսել գրքաբար 1749-ին, Կ. Պոլսում: 528 էջանոց յիշեալ գրքում քննարկուած են հին եւ միջնադարեան գիտութեան տարբեր բնագաւառները, փիլիսոփայութիւնը, աստուածաբանութիւնը, արուեստներն ու արհեստները: Մեկնաբանուած է շուրջ 1200 բառայօդուած:

<sup>7</sup> Ա.Ու.ՔԵԼԵԱՆ Ս., հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զարգացման պատմութիւն, հտ. 3, Եր. 1975, էջ 146:

<sup>8</sup> ԺԸ. դարի հեղինակ, ծնունդով Կ. Պոլսեցի, բայց արմատներով Կեսարիայից, ինչպէս ստորագրել է ինքը՝ «Արսէն դպիր գարմիւս կեսարեան»: Աչակերտել է մշակութային գործիչ Յակոբ Նալեանին (1701-1764): Չչիոթել յայտնի գիտնական ու տաղերգու Բաղդասար դպիրի որդի Արսէն դպիրի հետ, որը մահացել 1711-ին: Աւելի մանրամասն՝ տե՛ս Ա.ՆԱՍԵԱՆ Յ., Հայկական մատենագիտութիւն, հտ. Բ., Եր., 1976, էջ 900:

Հարկ է նշել նաև Մխիթարեան միաբանութեան անդամ, վաղամեռիկ Հայր Ղուկաս Ստեփանոսեան Սեբաստացու (1709-1752) «Համառօտ պատմութիւն թագաւորացն Հայոց եւ Աշխարհագրութիւն Հայաստանի եւ Աշխարհագրական քառարան» ստուար աշխատութիւնը, որը ցարդ անտիպ է եւ, դատելով եղած տեղեկութիւններից, հանրագիտական բնոյթի է<sup>9</sup>:

Վերադառնանք Հայր Մ. Բժշկեանի «Ճեմարան գիտելեաց» աշխատութեանը, ուր քննարկուած են գիտութեան եւ մշակոյթի հետեւեալ բնագաւառները՝ Զինչ է Աստուած(6)<sup>10</sup>, Արուեստ(3), Լեզուագրութիւն(5), Գրագրութիւն(5), Համրագրութիւն(2), Հեռագրութիւն(2), Տպագրութիւն(2), Քերականութիւն(5), Ճարտասանութիւն(5), Բանաստեղծութիւն(5), Իրաւագիտութիւն(2), Բժշկականութիւն(5), Վիրաբուժութիւն(1), Վաճառականութիւն(2), Նաւուղղութիւն(2), Երաժշտութիւն(4), Նկարչութիւն(2), Քանդակագործութիւն(2), Գիտութիւնք(2), Աստուածաբանութիւն(6), Փիլիսոփայութիւն(8), Մէտեորոյ(24), Հանքաբանութիւն(12), Քիմիականութիւն(3), Տիեզերագրութիւն(15), Աշխարհագրութիւն(17), Մասիէմաթիկայ(8), Երկրաչափութիւն(5), Եռանկիւնաչափութիւն(1), Ճարտարապետութիւն(4), Դիտակաբանութիւն(2), Ընդօրինակութիւն(2), Ստուերաչափութիւն(2), Մեքենականութիւն(4), Զրակչութիւն(6), Օդաչափութիւն(3), Հրարուեստութիւն(3), Ժամանակախօսութիւն(16), Պատմագրութիւն(6), Պետութիւնք Աշխարհի(7), Եօթն հրաշալիք(15), Դիցաբանութիւն(20), Դիւցազունք կամ կիսաստուածք(20), Տնկաբանութիւն(15), Կենդանագրութիւն(40), Մարդակազմութիւն(41):

Ինչպէս տեսնում ենք Հայր Մ. Բժշկեանի յիշեալ հանրագիտարանում բնական գիտութիւններին տրուած է շուրջ 230 էջ՝ դրքի ընդհանուր ծաւալի 60 տոկոսից աւելին: Եւ եթէ մէկ անգամ էլ կարդանք դրքի վերնագիրը՝ «Ճեմարան գիտելեաց», ապա եկեղացական գործիչ Հայր Մ. Բժշկեանի համար գիտելիքների մէջ գերակշռութիւնը բնական գիտութիւններինն են: Կայ եւս մէկ ուշագրաւ փաստ: Գրքում ամենաշատ էջեր՝ 40, նուիրուած են կենդանաբանութեանը: «Ճեմարան գիտելեացի» կա-

<sup>9</sup> Մխիթար Սեբաստացու սան Ղուկաս Ստեփանոսեան Սեբաստացու մասին տե՛ս ՂՈՒԿԱՍ ՍԵՐԱՍՍԱՏԻ, Դաւիթ Բեկի պատմութիւնը, Երեւան, 1988, էջ 8:

<sup>10</sup> Փակագծերում բերուած թուերը համապատասխան բնագաւառին նուիրուած էջերի քանակն է:

ուղեցուածքը այսպիսին է. նախ՝ չափածոյ, քառատողերի ձեւով տրուում է բուն նիւթը եւ ապա՝ տողատակերում արձակ շարադրուում է տուեալ գիտութեանն առնչուող տարաբնոյթ արժէքաւոր տեղեկութիւններ, որոնց մեծ մասը յազեցուած են պատմական յոյժ կարեւոր տեղեկութիւններով: Նիւթը չափածոյով ներկայացրած Հայր Մ. Բժշկեանը առաջինը, առաւել եւս՝ վերջինը է: Հին հռոմէական փիլիսոփայ, բանաստեղծ եւ բնագէտ Կարոս Տիտոս Լուկրեցիոսը (մօտ մ.թ.ա. 99 - մ.թ.ա. 55) հեղինակն է լատիներէնով գրուած հանրայայտ բնագիտական մի պոեմի, որը յետագայում վերնագրուել է «Իրերի բնութեան մասին»: Յիշեալ հանրագիտարանային բնոյթի պոեմը հին աշխարհի նիւթապաշտ մտքի ամբողջական պահպանուած միակ գիտական յուշարձանն է:

Լուկրեցիոսի ժամանակակից մէկ այլ հռոմէացի բանաստեղծ Մարո Պուբլիոս Վիրգիլիոսի (մ.թ.ա 70 - մ.թ.ա 19) «Գեորգիկա» հանրագիտարանային բնոյթի երկը նոյնպէս չափածոյ է: Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Եղուարդ Վրդ. Հիւրմիւզեանի (1799-1876) 1851-ին լոյս տեսած իւրօրինակ հանրագիտարան «Բուրաստանք» գործը նոյնպէս չափածոյ է:

Այնուհանդերձ, ի՞նչ կարիք կար տողատակերի արձակ շարադրանքին, որը կիրառել է Հայր Մ. Բժշկեանը: Միանգամայն համամիտ ենք Հայկ Դաւթեանի յայտնած կարծիքին. «Հաւանաբար զգալով, որ այդ եղանակով (խօսքը չափածոյի մասին է - Ա.Փ.) լիակատար խօսք ասել չի կարող (ակնարկում է Մ. Բժշկեանին - Ա.Փ.), տողատակերում արձակով շարադրել է տուեալ գիտութեան էութիւնը, քաղուածքներ արել ուրիշ հեղինակների»<sup>11</sup>: Անվարան կարելի է պնդել, որ Հայր Մ. Բժշկեանի գրքում տողատակերում բերուած տեղեկութիւնները շատ-շատ են եւ յոյժ կարեւոր:

Հայր Մ. Բժշկեանը ԺԹ. դարի սկզբում գիտական մեծ սիրանք է կատարել: Յայտնի է, որ բնագիտական եզրաբանութեան խնդրում թէ՛ Վենետիկի եւ թէ՛ Վիեննայի Մխիթարեանները ծայրայեղական են: Այսպէս՝ ընդհուպ մինչեւ ԺԹ. դարի վերջը շատ ու շատ Մխիթարեան գործիչներ (Յ. Ստեփանեան, Մ. Քաջունի, Մ. Աղաչբաղեան եւ ուրիշներ) արդէն համընդհանուր

<sup>11</sup> Դ.Ա.ԹԵԱՆ Յ., Հայ գիրքը 1801-1850 թուականներին, Եր., 1967, էջ 20:

ճանաչման արժանացած քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա, մեխանիկա եւ այլ եզրերի փոխարէն շատ մեծ ուշացումով փորձում էին կիրառել լրիւ հայացրած տարրաբանութիւն, բնախօսութիւն, տնկաբանութիւն, մեքենագիտութիւն, ջրակշռութիւն եւ այլ եզրեր: Այսպէս, Մ. Քաջունին 1870 թ. Վենետիկում ամբողջովին քիմիային նուիրուած գրաբարով լոյս ընծայած եռահատոր ուսումնասիրութիւնը վերնագրել է «Տարրաբանութիւն»: Մ. Քաջունու նշուած գրքի հրատարակումից 65 տարի առաջ լոյս տեսած «Ճեմարան գիտելեաց»-ում Հայր Մ. Բժշկեանը, հետեւելով եւրոպացի բնագէտներին, գործածել է միայն քիմիա, քիմիականութիւն, մաթեմատիկա, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն եւ այլ՝ միջազգային ճանաչման արժանացած եզրեր: Հայր Մ. Բժշկեանը քաջ գիտակցել է, որ իր ժամանակ կիրառուող տարրաբանութիւն, բնալուծութիւն եւ տարրագիտութիւն բառերը չեն արտայայտում այն գիտութեան բուն էութիւնը, որն այսօր ողջ աշխարհում յայտնի է քիմիա անուամբ:

Խորհրդային Հայաստանում Հայր Մինաս Բժշկեանի ստեղծագործութիւններին առաջին տեղեկութիւնը բերուած է «Հայ գիտնականներ, հրապարակախօսներ, ժուռնալիստներ» աշխատութիւնում. «Վեներտիկի Միսիթարեան միաբան է եղել, որ թողել է՝ պատմաբանասիրական եւ քերականական աշխատութիւններ: Այդ աշխատութիւնները գրուած են կրօնական աշխարհայեացքով, բայց պարունակում են փաստական միւթեր» (Երեւան, 1960, էջ 64):

Հայր Մինաս Բժշկեանի փիլիսոփայական աշխարհայեացքը երկու-երեք էջերի սահմանում ներկայացուած է է. Յարութիւնեանի ուսումնասիրութիւններից մէկում<sup>12</sup>:

Հայր Մինաս Բժշկեանի «ճեմարան գիտելեաց»ին հպանցիկ անդրադարձել է հայ գրքի երախտաւոր մատենագէտներից մէկը՝ Յ. Դաւթեանը: Ըստ արժանւոյն կարեւորելով եւ դրուատելով յիշեալ հանրագիտարանը, Յ. Դաւթեանը՝ ինչպէս վայել է լրջմիտ

<sup>12</sup> ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Է., Հայ փիլիսոփայական միտքը XIX դարի առաջին կեսին, Եր., 1965, 321 էջ:

գիտնականին գրել է. «Գրքի գիտական արժեքի ամբողջական գնահատականը թողնում եմ մասնագետներին»<sup>13</sup>:

Հայր Մինաս Բժշկեանի գրքի հանդէպ միանգամայն այլ կարծիք է յայտնել է. Ջրբաշեանը: 1989-ին Երեւանում լոյս տեսած «Գրողը եւ ժամանակը» գրքում գետեղուած է նաեւ 1968-ին նրա գրած «Դիդակտիկ պոեմները հայ գրականութեան մէջ» բաւական ծաւալուն յօդուածը: Նախ յօդուածի վերնագրի մասին: Կարծում ենք «Ճեմարան գիտելեաց»ը պոեմ, այն էլ դիդակտիկ պոեմ չէ: Ինչեւէ. սա, ինչպէս ասուում է, չարեաց փոքրագոյնն է: Է. Ջրբաշեանը իր յօդուածի առաջին տողից մինչեւ վերջը ժխտողական, ինչու չէ, նաեւ ծաղրական վերաբերմունքի է արժանացրել շուրջ 200 տարի առաջ գրուած գիտական այդ լուրջ ուսումնասիրութիւնը. «Դա ֆիշտ եւ ֆիշտ 1000 ֆառատող ունեցող մի «չափածոյ հանրագիտարան» է»<sup>14</sup>:

Է. Ջրբաշեանը չի սխալուել, միայն թէ անտեղի են չակերտները: Այո դա չափածոյ մի հանրագիտարան է եւ այդ հանրագիտարանը գրուած է Հայաստանից շատ հեռու գտնուող մի կղզում, ուր լանջախաչ կրող կոռսակրօն քահանաները տիւ ու գիշեր գիտութեան բոլոր բնագաւառների վերաբերեալ դասադրքեր եւ մենագրութիւններ էին գրում, որ Հայաստանի եւ հայ գաղթօջախների հայ ուսանողները ըմբոշինեն գիտութեան համն ու հոտը: Իսկ Մինաս Վրդ. Բժշկեանի յիշեալ գրքի լոյս ընծայման տարում, 1815-ին Հայաստանում նոր-նոր մի քանի գրքեր պիտի տպագրուէին Վաղարշապատում, իսկ բնագիտութեան վերաբերեալ գրքեր պիտի տպագրուէին առնուազն մէկ դար յետոյ միայն: Այո, մինչեւ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատուելը քիմիային, Ֆիզիկային, կենսաբանութեանը, աշխարհագրութեանը, երկրաբանութեանը, հանքաբանութեանը եւ աստղագիտութեանը նուիրուած հայատառ որեւէ մենագրութիւն կամ դասագիրք չի հրատարակուել:

Ընդհատենք մի պահ եւ նշենք, որ Հայր Մինաս Բժշկեանի յիշեալ հանրագիտարանի լոյս աշխարհ գալուց հինգ տարի առաջ Նապոլէոն Առաջինի կայսերական հրամանագրով անձեռնմխելի է համարուել Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հաստա-

<sup>13</sup> ԳԱԻԹԵԱՆ Յ., նշ. աշխ., էջ 20:

<sup>14</sup> ՋՐԲԱՇԵԱՆ Է., Գրողը եւ ժամանակը, Եր., 1989, էջ 42:

տուած Մխիթարեան միաբանութիւնը, որպէս ակադեմիական հաստատութիւն: 1818-ից «Վեցնետիկի Մխիթարեան միաբանութիւնը կը կոչուէր միանգամայն Համալսարանական Հաստատութիւն եւ մերթ Գիտական ձեմարան Հայկական Ուսմանց»<sup>15</sup>:

Ուրեմն, Հայր Մինաս Բժշկեանի «Ձեմարան գիտելեաց»ը կարելի է համարել նաեւ ակադեմիական հաստատութիւնում լոյս տեսած մի ուշադրաւ ուսումնասիրութիւն:

Վերադառնանք է. Զրբաշեանի՝ վերը նշուած յօդուածին. «Ամէնուրեք հեղինակը (խօսքը Մ. Բժշկեանի մասին է - Ա.Փ) ձգտում է գիտական պատկերացումները հաշտեցնել կրօնական պատուիրանի, քնութագրի կոնկրետութիւնը՝ գեղարուեստական որոշ տպաւորութիւնների հետ»<sup>16</sup>: Հայր Մինաս Բժշկեանը գիտութիւնը չի հաշտեցրել կրօնի հետ, քանի որ նման հարցապնդում չի հետապնդել: Ի՞նչ «գիտական եւ կրօնական գաղափարների հաշտեցման» մասին է խօսքը, երբ ԺԹ. դարի առաջին քառորդին կուսակրօն քահանայ Մինաս Բժշկեանը գրել է. «Քիմիականութիւնն ոչ միայն զհակեալ մասունս մարմնոց անդրէն ի միմեանս խառնէ, եւ քաղադրէ, այլեւ զգանազան մասունս այլ եւ այլ մարմնոց խառնեալ ի միմեանս՝ պէսպէս չափով՝ զնոր մարմինս ի լոյս ընծայէ»<sup>17</sup>: Ուշադրութիւն դարձնենք. «պէսպէս չափով», այլ խօսքով՝ «որոշակի կշռային յարաբերութեամբ» արտայայտութեանը: Ընդհուպ մինչեւ ԺԸ. դարի վերջերը քիմիան առաւելապէս նկարագրական գիտութիւն էր, եւ քանակական մեթոդները քիմիայում դեռեւս իրենց զգացնել չէին տալիս: 1983-ին Մոսկուայում ռուսերէնով հրատարակուած «Քիմիագիտութեան կայացումը» գրքի տիտղոսաթերթում պատկերուած է կշեռքը: Այո, կշեռքը եւ քանակական յարաբերութիւնները քիմիան հանեցին ալքիմիայի դարաւոր գաղջ մշուշից եւ դրեցին ճշմարիտ գիտութեան ուղու վրայ: Քանակական մեթոդները տրուեցին քիմիական երեւոյթների համեմատական եղանակ, որ հիմնուած է Ֆիզիկական սարքերի օգնութեամբ իրագործող չափի եւ կշռի խիստ հաշուառման վրայ:

է. Զրբաշեանի արտայայտած կարծիքները հերքելու համար բերենք մի քանի հատուածներ Հայր Մինաս Բժշկեանի միւշեալ

<sup>15</sup> ՃԱՆԱՇԵԱՆ Ն. Մեսրոպ Վրդ., նշ. աշխ., էջ 86:

<sup>16</sup> ԶՐԲԱՇԵԱՆ Է., նշ. աշխ., էջ 43:

<sup>17</sup> ԲՃՇԿԵԱՆ Մ., Ձեմարան գիտելեաց, Վեցնետիկ, 1918, էջ 114:

գրքից: «Ճեմարան գիտելեաց» ուժ եկեղացական գործիչ Հայր Մինաս Բժշկեանը առաջիններից մէկը մեզանում աւքիմիան ընդունել է որպէս կեղծ եւ գիտական հիմքից զուրկ գիտութիւն՝ հակադրելով դրան իր ժամանակի եւրոպական գիտական մակարդակն ապահովող քիմիա գիտութիւնը:

Եւս մի քանի օրինակ: Ահա մագնիսի՝ չափազանց հակիրճ եւ գիտական նկարագրութիւնը «Ճեմարան գիտելեաց» ուժ: «Մագնիսն է քար ինչ երկաթախառն ձուլեալ յերկաթոյ ի քարէ յիւղոյ եւ յաղէ. որոյ չորք են գլխաւոր գօրութիւնք. ձգիչ՝ վանիչ՝ ուղղիչ՝ եւ հաղորդիչ» (էջ 110):

Ահա եւ բոյսին եւ մոլորակներին տուած մեկնաբանութիւնը: «Տունկն անեցուն բոյս՝ իրրեւ կենդանին, ունի գործարանս՝ որով հիւքք բաշխին. այլեւայլ մասունք՝ ծուծ միս թել եւ մաշկք, կեղեւ եւ ոգիք՝ զընկին ի նմին (էջ 279): «Մոլորակք չունին զսեպհական լոյս, այլ յարեգակնէ ընդունին, որք եւ թափառական շարժամար իւրեանց՝ օր ըստ օրէ փոխեն գոյիրս իւրեանց ի գոյիակոսի» (էջ 126):

Էլ ի՞նչ գիտական մակարդակով ներկայացնէր անկենդան եւ կենդանական աշխարհը Հայր Մինաս Բժշկեանը, որպէսզի արժանանար ընթերցողի համակրանքին:

Աւելացնենք նաեւ, որ Մինաս Վրդ. Բժշկեանը, եւ ոչ միայն նա, ԺԹ. դարի սկզբին փորձեցին եւրոպական գիտութեան վերջին նուաճումները յաւուր պատշաճի ներկայացնել հայ ընթերցողին: Տեղին է այստեղ մէջբերել Արշակ Չոպանեանի՝ այսօր էլ իր արժէքը չկորցրած չափազանց տեղին արտայայտութիւնը Մխիթարեանների մասին. «Մխիթարեանները ամբողջ արեւմուտքը բացին հայուն առջեւ»<sup>18</sup>:

Ցաւով պէտք է արձանագրել, որ Է. Զրբաշեանից շուրջ մէկ դար առաջ Մխիթարեանների հրատարակած գիտական աշխատութիւնների հանդէպ էլ աւելի բացասական կարծիք է յայտնել հայ բնագիտութեան պատմութեան քաջատեղեակ Մ. Նալբանդեանը. «Մինչեւ այս օրս չէ երեւցած դոցա մէջ մի ուսումնական անձն, եւրոպական բազմակողմանի եւ տիեզերական կրթութեամբ: Դոցա գիտութիւնքը այս ու այն ուսման ճիւղի

<sup>18</sup> ՃԱՆԱՇԵԱՆ Ն. Մեսրոպ Վրդ., նշ. աշխ., էջ 88:

մէջ եմ էնցիկլոպեդիկական հատ ու կտոր տեղեկութիւն»<sup>19</sup>: Մեր ուսումնասիրութիւններից մէկում հնարատրինա անդրադարձել ենք Մ. Նալբանդեանի՝ Մխիթարեանների բնագիտական հրատարակութիւնների հանդէպ ունեցած վերաբերմունքին<sup>20</sup>:

«Ճեմարան գիտելեաց»ում գրեթէ բացակայում են Հայաստանին, հայ ժողովրդին առնչուող փաստերը, պատմական իրողութիւնները: Եղածներն էլ որակ չեն կազմում: Հանրագիտարանի էջերում հպանցիկ խօսուում է Վանայ եւ Սեւանայ ջրերի որակի, բուսական եւ կենդանական աշխարհների մասին: Գրքի 215 էջում կայ կարեւոր տեղեկութիւն գերմանացի ականաւոր հայագէտ Եօհան Շրեօդերի մասին. «Սուրբ Մեսրոպ յետ գիւտի գրոց ետուն բերել ի կոստանդնուպոլսոյ զընտիր օրինակ մի աստուածաշունչ գրոց ի յոյն բարբառ. գոր անչափ վսեմ եւ վայելուչ քարգմանեցին ի հայ՝ բաղդատելով ասորոց եւ այլոց քարգմանութեանց: Մինչեւ Յովհաննէս Մկրտչեր գերմանացի մեծապէս դրուատէ երեւելի մատենագրաց հայկական քարգմանութիւն աստուածաշնչին ասէ այնչափ է գերապանծ, մինչ արժան էր բաղդատութեամբ ուղղագրել զբուն յունականն»<sup>21</sup>:

*Յատկանշական է գրքի 13-րդ էջում հայոց լեզուին նուիրուած քառատողը.*

<sup>19</sup> ՆԱԼԲԱՆԻԵԱՆ Մ., Մխիթար Սեբաստացի եւ Մխիթարեանք, «Հիւսիսափայլ», 1858, Վ. 5:

<sup>20</sup> ՓԱՇԱՅԵԱՆ Ա., Մխիթարեանների քնագիտական հրատարակութիւնները ԺԸ-ԺԹ. դարերում, «Բազմավէպ», 2001, 1-4, էջ 337:

<sup>21</sup> Մ. Բժշկեանի յիշատակած Եօհան Շրեօդերը (Սթրոդեր) (1680-1756), գերմանացի արեւելագէտ-հայագէտ է: Տիրապետել է հայերէնին, եբրայերէնին, եթովպերէնին: 1712-1756 թթ. վարել է Մարբուրգի (Գերմանիա) համալսարանի արեւելեան լեզուների ամբիոնի հայագիտութեան բաժինը: 1711-ին Ամստերդամում լոյս է ընծայել «Արամեան լեզուին գանձ» աշխատութիւնը, որտեղ տուել է չափազանց արժէքաւոր տեղեկութիւններ հայերի եւ հայերէնի մասին: Ըստ Շրեօդերի՝ հայերէնը աշխարհի հնագոյն լեզուներից է եւ գուցէ զիջում է միայն եբրայերէնին: Ուստի, այն ինքնուրոյն լեզու է եւ չի սերել որեւէ այլ լեզուից:

Իսկ հայոց լեզուն՝ գոյով նոյս եւ հին  
երեսուննուկէս՝ տառս ունի հարկին,  
Որով գեղեցիկ՝ հնչէ բացատրէ,  
Ըստ բնիկ հնչման՝ լեզուաց բնաւին:

1975 Երեւանում լոյս է տեսել Ա. Առաքելեանի «Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զարգացման պատմութիւն» աշխատութեան երրորդ հատորը, ուր ոչ մի տող չկայ Հայր Բժշկեանի «Ճեմարան գիտելեաց» գործի մասին: Ա. Առաքելեանի նշուած գրքում Մխիթարեան միաբաններից ընդգրկուած են միայն ԺԹ. դարի առաջին կէսին ստեղծագործած Ղուկաս Օղուլլուխեանի, Իգնատիոս Փափագեանի, Մատթէոս Սաղաթելեանի, Անանուն Հեղինակները<sup>22</sup> բնագիտական աշխատութիւնները:

Հայր Մինաս Բժշկեանի «Ճեմարան գիտելեաց»ին մեր ուսումնասիրութիւններից մէկում<sup>23</sup> առաջին անգամ տրուել է ծաւալուն մեկնաբանութիւն «Քիմիական գիտելիքները Մ. Բժշկեանի «Ճեմարան գիտելեաց»ում վերնագրով շեշտադրելով Մ. Բժշկեանի բերած տեղեկութիւնները քիմիայի եւ հանքաբանութեան բնագաւառներում միայն:

Չափազանց անակնկալ էր մեզ համար «Ճեմարան գիտելեաց»ին տուած մէկ այլ գնահատական: Խօսքը «Հայկական համառօտ հանրագիտարանում» Մ. Բժշկեան բառայօդուածի մասին է, ուր ի մասնաւորի գրուած է. «Ճեմարան գիտելեաց» (1815) աշխատութեան մէջ Մ. Բժշկեանը ներկայացրել է յունա-

<sup>22</sup> 1842 թ. Վիեննայում լոյս է տեսել «Քնական պատմութիւն գոր յօրինեալ է աշակերտաց մեծի հօրն Մխիթարայ» գուտ բնագիտական բնոյթի գրքի առաջին հատորը, իսկ երկու տարի անց, 1844-ին՝ երկրորդը: Երեւանի ազգային գրադարանում եղած օրինակում երկու հատորները ամփոփուած էին մէկ ընդհանուր հատորում 330 էջ առաջին հատորը եւ 260 էջ՝ երկրորդը: Յատկանշական է, որ յիշեալ գիրքը գրուած է աշխարհաբար արեւմտահայերէնով: Ինչպէս երեւում է գրքի վերնագրից, այն խմբային աշխատանքի արդիւնք է, եւ գրքի հեղինակները համեստօրէն իրենց անունները չեն գրել գրքի վրայ: Սակայն նրանց Մխիթարեան միաբանութեան անդամները լինելը կասկած չի յարուցում, քանզի շեշտուած է նրանց՝ Մխիթար Սեբաստացու արչակերտներ լինելու փաստը:

<sup>23</sup> ՓԱՇԱՍԵԱՆ Ա., XIX դարի քիմիան հայ բնագետների աշխատութիւններում, Երեւան, 1992, էջ 12-26:

հոռմեական դիցաբանութիւնը, ժողովուրդների կազմը եւ փառաբանութեան աստիճանները»<sup>24</sup>: Ոչ աւելի, ոչ պակաս: Ինչպէ՞ս հասկանալ սա: Անտեղեակութիւն, թէ անստեղծութիւն: Ինչ էլ որ չլինի, նման մեկնաբանութիւնը պատիւ չի բերում հեղինակաւոր այս հրատարակչութեանը: Ո՞րը մնացին հապա «Ճեմարան գիտելեաց»ի 380 էջերում բերուած վիթխարածաւալ տեղեկութիւնները քիմիայի, բուսաբանութեան, հանքաբանութեան, ֆիզիկայի, մթնոլորտաբանութեան, մեքենագիտութեան եւ բնագիտութեան այլ ճիւղերի վերաբերեալ: Կարեւոր մի հանգամանք եւս: Խմբագրութեան աշխատակիցները գոնէ գրքի վերնագիրը ուշագիւր կարդային: Ճեմարան բառը երեք իմաստ ունի ժամանակակից արդի հայերէնում՝ ակադեմիա, բարձրագոյն ուսումնական հաստատութիւն, զբօսարան<sup>25</sup>: Որ իմաստով էլ որ կարդանք Հայր Մինաս Բժշկեանի գրքի վերնագիրը, այն չի կարող նուիրուած լինել յունահռոմէական դիցաբանութեանը, ժողովուրդների կազմին եւ քաղաքակրթութեան աստիճաններին: Առաւել ցաւալի է այն, որ Հայր Մինաս Բժշկեանի յիշեալ հանրագիտարանի մասին գրուած է մի հանրագիտարանում, որի առաջին հատորի ներածականում ի մասնաւորի գրուած է. «Ներկայ հանրագիտարանի հրատարակման անհրաժեշտութիւնը քիսում է ընթերցողների ցանկութիւնից՝ ունենալու մի համապարփակ տեղեկատու հայ ժողովրդի ու Հայաստանի մասին: Այս իմաստով այս փոստատարը գալիս է լրացնելու «Հայկական սովետական հանրագիտարանի 12-հատորեայ հրատարակութիւնը (1974-1983թթ.)՝ շեշտը դնելով գուտ հայագիտական նիւթի վրայ»<sup>26</sup>:

Ամսագրային միայն մէկ յօդուածով անհնար է քննարկել ժ. Դարի առաջին քառորդում լոյս տեսած եւ վերահրատարակուած Մինաս Վրդ. Բժշկեանի յիշեալ աշխատութեան էջերում արծարծուած բոլոր հիմնադրոյթները: Հաւատացած ենք սակայն, որ մեր այս յօդուածը միայն սկիզբն է վեհնետիկի Միթխարեան միաբանութեան երեւելի անդամներից մէկի՝ Հայր Մինաս Բժշկեանին նաեւ բնագէտ ներկայացնելու համար:

ԱՍՍՏՈՒՐ ՓԱՇԱՅԵԱՆ

<sup>24</sup> ՀՀ, Երեւան, 1990, հտ. 1, էջ 530:

<sup>25</sup> Ա.ՂԱՅԵԱՆ Է., Նշ. աշխ., հտ. 2, էջ 941:

<sup>26</sup> ՀՀ, Երեւան, 1990, հտ. 1, էջ 5:

## The encyclopedia "Academy of Knowledge" by Father Minas Bjshkyan

(summary)

ASATUR PASHAYAN

An important and a valuable part of the inheritance in the natural sciences of The Venice Mekhitarian Congregation is the encyclopedic dictionaries published by them. In terms of selected materials, approach, design and high printing quality The Mekhitarians' dictionaries are invaluable assets in the history pages of the development of Armenian intellectual culture.

In the XIX c. the first encyclopedia published by The Congregation was an old Armenian (grabar) 380-paged book "Academy of Knowledge" by Father Minas Bjshkyan\*(1777-1851), a Congregation member, printed in Venice in 1815, later republished in 1818.

In this article, for the first time the mentioned work is reviewed as an encyclopedia. In "Academy of Knowledge" encyclopedia the following fields of science, culture and different teachings are discussed: Theology, Religion, Culture, Linguistics, Typography (Book making), Clerical work, Telegraphy, Grammar, Rhetoric, Navigation, Geology, Geography, Philosophy, Healing, Trade, Skiagraphy, Calculus, Hydrostatics, Optics, Alchemy, Physics, Mathematics, Geometry, Trigonometry, Mineralogy, Mechanics, Aerology, Pyrotechnics, Painting, States of the World, Botany, Anthropology, Cosmology, Chronology, Mythology.

Each of the fields is represented by a quatrain or quatrains, and on the foot notes by breviers there are estimable and worthy annotations rich in historical information concerning the field. Undoubtedly, the represented encyclopedia would loose its scientific value without those footnotes.

The information in "Academy of Knowledge" completely corresponds with the European scientific standards of that period. In fact, all the work done by Father M. Bjshkyan should be considered as scientific. Note that at the beginning of the XIX century there was no work in natural sciences ever published neither in Armenia nor in the South Caucasus.

At the end of the book there are four graphical pictures entirely concerning Anthropology, Zoology, Astronomy and Mathematics.

In the Soviet Armenia, "Academy of Knowledge" encyclopedia has been reflected since the 1960's (by Edward Harutunyan, Edward Jerbashyan, and Haik Davtyan). The Monologue "The XIX c. Chemistry in the works of Armenian natural philosophers" published in Yerevan in 1992 opens with a chapter called "Chemical knowledge by Minas Bjshkyan from Academy of Knowledge."